ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ՝ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ - ՀԱՋՈՐԴՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ [ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍ 12305.87]

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Դիմորդ մատակարարողի անունը՝ _____
Ստացողի անունը՝ _____
Ստացողի գործի համարը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Սկսած այս ծանուցման ամսաթվից հետո քսաներորդ (20) օրվանից՝ դուք այլևս իրավասու չեք IHSS ծրագրից վճարումներ ստանալու համար ձեր ընթացիկ ստացողին կամ որևէ այլ անձին ծառայություններ տրամադրելու համար: Եթե դուք արդեն սկսել եք ծառայությունների տրամադրումը ձեր ընթացիկ ստացողին, դուք կարող եք վճարվել միայն այն ծառայությունների համար, որոնք տրամադրվել են մինչև _____-ը:

Ահա թե ինչու դուք այլևս իրավասու չեք IHSS մատակարարող լինելու համար.

Ձեր սկզբնական անդամագրումից հետո վարչաշրջանը/հանրային իշխանությունը/շահույթ չհետապնդող կոնսորցիումը տեղեկացել է քրեական կենսագրության ստուգման միջոցով, որ դուք դատապարտված եք եղել այնպիսի հանցագործության(ների) համար, որը ձեզ զրկում է IHSS մատակարարող լինելու կամ ծառայություններ տրամադրելու համար IHSS ծրագրից վճարումներ ստանալու իրավասությունից՝ հիմնվելով Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մաս 12305.87-ի վրա: Այս հանցագործություն(ներ)ը, որը/որոնք որակազրկել է/են ձեզ, ցուցադրված է/են ներքևում՝

_____
_____
_____
_____

Ստացողին նույնպես ծանուցում է ուղարկվել՝ տեղեկացնելով նրան, որ դուք դատապարտված եք եղել այնպիսի հանցագործության համար, որը ձեզ զրկում է IHSS մատակարարող լինելու իրավասությունից: Ստացողը տեղեկացվել է, որ այս դատապարտման մասին տվյալները շատ զգայուն բնույթի են և պետք է գաղտնի պահվեն: Ստացողին օրենքով արգելվում է կիսել այս տեղեկության որևէ մաս մեկ այլ անձի կամ հաստատության հետ:

Չնայած որ դուք դատապարտվել եք վերոնշյալ հանցագործության(ների) համար, IHSS ստացողը կարող է վարչաշրջանին ներկայացնել լրացված SOC 862 ձևը՝ «IHSS Ստացողի հայցը մատակարարողի հրաժարման համար», որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS մատակարարող ու վճարումներ ստանալ IHSS ծրագրից ծառայություններ տրամադրելու համար <u>միայն</u> այդ ստացողին և <u>միայն</u> այն վարչաշրջանում, որտեղ ներկայացվել է SOC 862-ը:

Դուք կարող եք նաև դիմել ընդհանուր բացառության համար, որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS մատակարարող մի քանի ստացողների համար ու վճարում ստանալ IHSS ծրագրից: Խնդրում ենք կարդալ կցված SOC 863 ձևը՝ «IHSS Դիմորդ մատակարարողի ընդհանուր բացառության հայց», որպեսզի իմանաք, թե ինչպես կարող եք ընդհանուր բացառություն խնդրել և ինչպես լրացնել ընդհանուր բացառության ձևը:

Եթե համաձայն չեք այս որոշման հետ, կցված ձևը բացատրում է՝ ինչպես կարող եք բողոքարկում խնդրել: Բողոքարկման ձեր գրավոր խնդրանքը պետք է ստացվի այս նամակի ամսաթվից վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում:

Եթե կարծում եք, որ վարչաշրջանի/հանրային իշխանության/շահույթ չհետապնդող կոնսորցիումի IHSS գրասենյակին տրամադրած տեղեկությունը սխալ է, դուք պետք է դիմեք Կալիֆորնիայի Արդարադատության բաժին կամ _____ վարչաշրջանի Գերագույն դատարանի քարտուղարին՝ պարզելու համար տվյալների աղբյուրը և դատական փաստաթղթերում կամ ձեր քրեական կենսագրության ստուգման մեջ պարունակվող տվյալներն ուղղելու համար:

Եթե որևէ հարցեր ունեք այս նամակի վերաբերյալ, կարող եք զանգահարել IHSS գրասենյակ նախորդ էջի վերևում նշված հեռախոսահամարով: